Հայտարարություն

Սոցիալական պաշտպանության վարչարարության երկրորդ ծրագիր
Վարկ թիվ 5398-ԱՄ

ՀՀ ֆինանսների նախարարության <<Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն>> պետական հիմնարկը հայտնում է, որ Համաշխարհային բանկի <<Սոցիալական պաշտպանվածության վարչարարության երկորդ ծրագիր>> վարկային ծրագրի շրջանակում **Սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացման մասնագետի** հանձնարարականի իրականացման համար խորհրդատու ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Հանձնարարականի նպատակն է ՀՀ ԱՍՀՆ-ն նախատեսում է վարձել անհատ խորհրդատու, որը ՍՊՎԾ-2-ի ԾՀԳ-ում կաշխատի, որպես Սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացման մասնագետ: Սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացման մասնագետ պետք է՝

- մասնակցի Ծրագրով նախատեսված սոցիալական ուղղվածության ենթածրագրերի իրականացման տեխնիկական հանձնարարականների մշակման աշխատանքներին, ապահովելով ՀՀ օրենսդրությամբ և ՀԲ-ի կողմից սահմանված ընթացակարգերի և ձևաչափերի կիրարկումը,
- կազմի իր մասնագիտական պատասխանատվության տակ գտնվող ենթածրագրերի իրականացման պլան-ժամանակացույցը և ապահովի նախատեսված միջոցառումների ժամանակին իրականացումը,
- ըստ անհրաժեշտության, իրականացնի Ծրագրի շրջանակներում նախատեսված սոցիալական ուղղվածության խորհրդատվական ենթածրագրերի նախնական արժեքների հետազոտություն

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. հունիսից՝ վեց ամսյա ժամկետով՝ երկարացման հնարավորությամբ:

Սոցիալական հարցերով մասնագետը պետք է ունենա՝

Սոցիալական պաշտպանության ծրագրերի իրականացման մասնագետը պետք է ունենա՝

- բարձրագույն կրթություն սոցիոլոգիայի կամ սոցիալական աշխատանքի մասնագիտության գծով,
- համապատասխան ոլորտում առնվազն հինգ տարվա աշխատանքային փորձ (սոցիալական պաշտպանության ոլորտի բարեփոխումների ծրագրերում աշխատանքային փորձը կդիտվի առավելություն),
- Սոցիալական պաշտպանության ոլորտի տարբեր ենթաոլորտների հիմնախնդիրների իմացություն, ռազմավարական պլանավորման գիտելիքներ, ռազմավարական փաստաթղթերի և զարգացման ծրագրերի մշակման փորձ,
- սոցիալական պաշտպանության ոլորտում վարվող քաղաքականության և ոլորտը կարգավորող ազգային օրենսդրության լավ իմացություն,

- գերազանց կազմակերպական և հաղորդակցական հմտություններ,
- հայերենի գերազանց իմացություն, անգլերենի իմացությունը կդիտվի որպես առավելություն,
- համակարգչային գրագիտություն:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչեւ **սույն թվականի մայիսի 22-ը** ներկայացնել հետաքրքրվածության գրություն եւ կենսագրական թերթիկ ստորեւ նշված հասցեով:

Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաեւ էլեկտրոնային փոստով:

ՀՀ Ֆինանսների նախարարության
<< Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն >> պետական
հիմնարկի գործադիր տնօրեն՝ Է. Ավետյանին
Երեւան 0010, Տ.Մեծ 4
Հեռախոս. (037410) 528742, (037411) 910581
Ֆաքս. (037410) 545-708
Էլ. փոստ. info@ffpmc.am